

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 ՄՆՃ.
Պաշտպանութեան 10 ՄՆՃ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ 4 ՄՆՃ.
Պաշտպանութեան 5 ՄՆՃ.
Դրանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
լայ :



ԼԵԱՔԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ 30 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսաց արշաւանքն՝ ինչպէս Ա-
սիոյ՝ նոյնպէս Եւրոպայի կողմն ալ ըն-
կերկրելու հաւանականութեան մէջ կը
տեսնուի : Ռուսք՝ այս տարի ոչ եւս
կրնան յարձակողականի սկիւղ Սիւրի
կողմն, ուր արագ երկրակալութիւն
ներ ընելու դիտաւորութեամբ պա-
տերազմի սկսած էին : Ռուսաց Սիւ-
րիական արշաւանքն ալ՝ Ռումէլի կող-
մին նման՝ վերջին աստիճանի անխո-
հեմութեամբ և յանդգնութեամբ ե-
ղաւ, և բնականաբար ձախողութե-
ամբ վերջապա : Վերջին լուրե-
րուն նայելով, Կարնոյ կուսակալ Խա-
մայիլ Հադդի փաշան, որ վաճառ զո-
րաբաժնին հրամանատար Ֆայիզ փա-
շային հետ միանալէն ետեւ քառասուն
հազարէն աւելի զօրք ունի իւր հը-
րամանաց ներքեւ, Մասն-Կէտիլի
կողմէն Ռուսաց Երեւանայ գաւառը
մտնելու վրայ է : Ռուսաց սահմա-
նապահին ամրութիւններն երեսի վը-
րայ թողուած են, մանաւանդ Երե-
ւանի կողմը բնական ամուր դերքերէ
զատ կարծենք բերդաքաղաք չկայ,
և հաւանական է որ սաստիկ յար-
ձակողական ընթացքով մ'երեւանայ
գաւառին հետ 'ի միասին Լիմիած-
նայ ամրութեան ալ Օսմանեան իշխանու-
թեան ձեռք անցնի : Այսպիսի լու-
ծում մը թուրքիոյ Հայոց համար մեծ
գոհութեան արժանի է, քանզի ան-
կարելի չէ որ կայսերական կառավա-
րութիւնն այն կողմերուն Հայ կուսա-
կալ մ'անուանէ, և Բիւրտերուն հա-
րատահարութիւններն ու աւաղա-
կութիւնները զսպելով բարդաւած
գաւառ մը կազմելու համար ազդու
միջոցներ ձեռք առնուին : Բայց աս-
կէ, Լիմիածնի առումը զայն բոլոր-
վին ազատելով Ռուսիոյ ազդեցութե-
նէն, Հայաստանեայց եկեղեցւոյ զը-
լուխը կը միանայ Հայոց ազգին մե-
ծագոյն մասին հետ, որ թուրքիոյ
մէջ կը բնակի և Օսմանեան տէրու-
թեան հաւատարիմ հպատակ է : Գա-
ղաթականապէս այս օգուտները թէև
անմիտելի են Լիմիածնի առումը,
բայց հարկ կը համարինք նաև այս ալ
ըսել որ Օսմանեան դատին ծառայե-
լով հանգերձ մեծ վնասներ տուող
ները Բիւրտերուն և այլ աւարառուե-
րն են :

Կարնոյն լէվընթ Հէրըլի ուղղեալ
նամակ մը կը ծանուցանէ թէ Հասա-
նալը և Սիպիլի Բիւրտերը բոլոր
Ալաշկերտի գեղերն աւար առեր ու
քանդեր են : Միայն թօլլարդ-գալէ
նահանգին մէջ Մէհմէտ փաշա Սիւր-
մէլին որդին և Հասթուքի նահանգին
մէջ թօլուս մը քրիստոնէականները պահ-
պանելով աւարառութիւնն արդիւր
են : Սաղոյ է որ այս անկարողութիւն

ները Ռուսաց Պայազիւր մտնելէն ե-
տեւ գործուած են՝ երբոր մերձակայ
գաւառաց Օսմանեան իշխանութիւն
ներն յետս կը նահանջէին և անիշ-
խանութիւն կը տիրէր, բայց և այն-
պէս թէ՛ Լէվընթ Հէրըլի թղթակ-
ցին տուած և թէ՛ նոյն իսկ Ռուսա-
կան աղբիւրէ առնուած լուրերու նա-
յելով, երեք հազարի չափ Հայ ըն-
տանիք Ռուսաց բանակին հետ գաղ-
թած են : Տարակոյս չունինք որ այս
գաղթականութիւնն եթէ չափազան-
ցութիւն չէ՝ քանզի այն կողմերու
Հայ բնակիչք իսկապէս ցանցաւ են, ոչ
Ռուսաց համակրութեան համար է,
և ոչ Պոլսոյն նման ապստամբու-
թեան արդիւնք, այլ պարզապէս
Բիւրտերուն անտանելի հարստահա-
րութիւններէն ազատելու բաղձնօք
եղած է : Տարակոյս չունինք որ Կար-
նոյ կուսակալ Խամայիլ Հադդի փա-
շան՝ թշնամին հիմայ սահմաններէն
վանելով՝ ապահովութիւնը վերահաս-
տատած և բանակին մէջ կարգապա-
հութիւնը սաստիկ հսկողութեան ներ-
քեւ գործ է : Ուստի եթէ Օսմանեան
բանակն Երեւանայ գաւառին մէջ յար-
ձակողականի սկսելով յառաջանայ,
այն ատեն թուրքիոյ Հայ տարրը նոր
կարեւորութիւն մը կրնայ առնուլ՝
բաղձնալով Հայ հպատակներ ալ ա-
ւելնալով Օսմանեան կառավարու-
թեան : Բայց ամենէն կարեւոր ար-
դիւնքը պիտի ըլլայ Լիմիածնի առ-
մամբ Հայաստանեայց եկեղեցւոյ հո-
գեւորապէս կատարեալ անկախութիւ-
նը, զոր Ռուսիոյ Պաշտօնէի տարիներէ
հետ սեղմած և կաշկանդած է, հա-
կառակ թուրքիոյ Հայոց բողոքանաց-
ելով Բիւրտերուն անիշխանութեան մի-
ջոյն մ'օգուտ քաղելով աւարառու-
թիւններ ըրած են, ի՞նչ պէտք է մը
տածել քրիստոնէից պաշտպանութեան
թեկնածոյ կառավարութեան մ'ըն-
թացքին վրայ, որ Հայաստանեայց ե-
կեղեցւոյ ամենէն լիարժեք իրա-
ւունքը բռնաբարած ու կապտած է :

Ռումէլի կողմէն եկած պատերազ-
մական լուրերը նպաստաւոր են միշտ
Օսմանեան զինուոյ Ֆայտիլի որ Ռուսք
'ի սկզբան Լօֆչա առած էին, բայց
Բիւրտեր փաշային հրամանաց ներքեւ
Օսմանեան զօրքն յիշեալ քաղաքը
թշնամեցն ձեռքէն կորցնց առաւ :
Ռուսք գործնաւ Լօֆչայի տիրելու
նպատակաւ չորս վաշտ հեծեալազօր
հան յարձակեցան, և հինգ ու կէս
ժամ պատերազմելէ ետեւ յետս նա-
նահանջելու պարտաւորեցան : Բէլ-
նայէն ալ Չէրքէշները կայծակի ա-
րագութեամբ, կրէ Օսման փաշային
հեռագիրը, հինգ վեց ժամու ձա-
նապարհն երկուք ու կէս ժամու մէջ
կարեն և Լօֆչայի օգնութեան հա-
սեր են :

Ըստ պաշտօնական հեռագրոյն,


այս կուսին մէջ Օսմանեան զօրքն
չորս մեռեալ և 21 վիրաւոր եղեր է,
մինչդեռ թշնամին մեծ կորուստ
տուած կերէի : Միւս կողմէն Ռուսք
իրենց պատերազմական յատակադէին
կատարման համար Բէլ-նայի վրայ
յարձակելու որոշում տուած ըլլալով,
իրենց բոլոր բանակները շարժումներ
կրնեն, և կըսուի թէ մեծ զօրու-
թիւն հաւաքելով հինգ-շարքի օրը
Բէլ-նայի վրայ երրորդ յարձակում
մ'ալ ըրեր են, որոյ վախճանին վրայ
պաշտօնական լուրն երէկ կ'ապա-
սուէր : Օսման փաշային զօրքը կրկնակի
յաղթութեամբ քաջալերուած՝ ան-
շուշտ Ռուսաց յարձակման սաստիկ
գիմարտութիւն ըրած է, և դուցէ
վիտինէն ալ օգնութիւն հասած ըլ-
լայ իրեն : Առայժմ Պալքանի կողմը
Ռուսաց յաղթութիւն տարակոյս չը
մնայ : Սիւլէյման փաշա կը հեռագ-
րէ թէ Նիքիոյ մեծ գուբան ալ Լսկի
Ջաղրա եկած էր : Բայց երբ Ռուսք
յաղթութեամբ ետ քաշուելու պարտա-
ւորեցան, մեծ գուբան ամենայն ա-
րագութեամբ 'ի վախճան գործեր
է, այնպէս որ Գրեշնիլ մէջ ալ հա-
ղիւ քանի մը վայրկեան կրցեր է ձիւն
իշխելով հանգիստ առնուլ, և առանց
կերակուր ուտելու իւր փախուստը
շարունակել է : Չէյսէքները Գրեշն-
իլ մէջ տան հազար իսլամ բնա-
կիչք ազատեր են, զորս Ռուսք իբրեւ
գերի պահած էին : Գիւրդաքաղաք
պատերազմը չփութ կերպարանք մը
կ'առնու, և Պոլսոյն ամրութեան ձախող
ապստամբութեան պատճառաւ բա-
ղում ընտանիք և գիւղեր 'ի կորուստ
կը մատնուին, պատերազմողներն ու
ոչ պատերազմողները, ապստամբներն
ու ոչ ապստամբները զատել գրեթէ
անկարելի ըլլալով այսպիսի խառնա-
կութեան ժամանակ, ուր Չէյսէք-
ները, Չէրքէշներն և ուրիշ ասոնց
նման անկանոն պատերազմողներ՝ աս-
պարէն ազատ կը գտնեն շատ ան-
գամ իրենց առջեւ : Ռուսիոյ նման
մեծ տէրութիւն կարծուած կառա-
վարութեան մը, որ կըսուէր թէ մի-
լիոններով զօրք ունի, քիչ անպատ-
ւութիւն չէ նոյն իսկ Պոլսոյն օգնու-
թեան կարօտ մնալ, և զանոնք
ապստամբութեան գրգռելէ ետեւ
փախչելու պարտաւորել :

Սոխում-Գալէէն օգոստ. 2 թիւով
առ Լէվընթ Հէրըլի ուղղեալ նամակ
մը կը ծանուցանէ թէ Կովկասի այս
կողմը գտնուող Օսմանեան զօրքերն
եւ պիտի բերուին, որովհետեւ եղած
արշաւանքն արդիւնք մը չէ կրցեր
յառաջ բերել :

Այս տնօրէնութիւնն իմաստուն
խորհուրդ մ'է, կըսէ յիշեալ թերթը,
որովհետեւ բաւական մեծակալ զօրու-
թիւն մ'ի լուր զբաղեցնել էր, ինչ-
պէս Գարատաղի պատերազմին մէջ :
Սակայն Ռուսիոյ տուած անդրութե-

ՊԱՅՄԱՆՔ

Գուրոյ զացած լրագրաց ճանրու-
ած արքը խորագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ ինչ գրութիւն խորագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի, Վալա-
իկա Սանտրքըլար Զատուկի թիւ
198, Կորսիս և Սիւլիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը : Ծախուած նա-
մակ չընդունուի :



թեան օրինակին չհետեւելու համար՝
թուրքերը թոյլ չպիտի տան որ ապրա-
տամբութեան թերազրեալ տեղացի
իսլամ ժողովուրդները Ռուսաց վրէժ-
խնդրութեան մատնուին, այս պատ-
ճառաւ յիշեալ ժողովուրդները թուր-
քիոյ հողը փոխադրելու միջոցներ
ձեռք առնուեցան :

Կայսերական հրամանագիր մը Հո-
պարթ փաշային կը յանձնէ այս փո-
խադրութիւնն, որ երեք շաբաթուան
մէջ կրնայ կատարել՝ 20 ի չափ պա-
տերազմական նաւերու ձեռօք :

Վերոյիշեալ նամակը կը ծանու-
ցանէ նաև թէ Չիմչուրայի մօտ Ռու-
սերէն պաշարուած և յուսահատ վի-
ճակի մէջ ինկած 6000 թուրք զօրա-
կանք Հոպարթ փաշայի հրամայած
նաւատորմին օգնութեամբ ազատեր
և հինգ պատերազմականներու մէջ
գրուեր են Ռուսաց լծիւններուն
կրակին ներքեւ, յորմէ երկու մարդ-
ընտելուր մեռեր են ծովապետին
նաւուն մէջ :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Բէլթա 7 օգոստ.

Յէնթէն քաղաքին մէջ գումարեալ
ժողով մը որոշեց՝ Օսման փաշային տարած
պայծառ յաղթութեանց համար ուրա-
խակցութեան հեռագիր մ'ուղղել իրեն :

Պէրլին 8 օգոստ.

Պիտարը իշխանն ու ընտանիքը Կաս-
թիլէյն կ'ապաստուին :

Կը ծանուցանեն թէ Ռուսիոյ Սամարա
քաղաքին կէսն հրդեհակէզ եղեր է :

Իլ 8 օգոստ.

Գերմանիոյ և Աւստրիոյ կայսերը այ-
սօր մեր քաղաքն եկան, և Հեռերին բնաւ
նախարար չկայ :

Այս գիշեր լուսավառութիւն պիտի
ըլլայ :

Երկրիս լրագրերն երկու կայսերաց
տեսակցութիւնը պարզ քաղաքավարական
կը համարեն :

Լոնտրա 9 օգոստ.

Թիբիլիզէն հեռագիր մը կը ծանուցա-
նէ թէ Միքայէլ Մեծ գուբան Ալեքսանդ-
րաբօլ գնացեր է, ուր պիտի երթայ նաև
Չէրքէշի վարակարը :

Թայիլ և Տէպա լրագրքը Յունաստա-
նի և Սերվիոյ բանակցութեանց 'ի գերե-
ւելելը կը հաստատեն :

Փարիզ 9 օգոստ.

Ֆրանսէ լրագիրը սուտ կը հանէ նա-
խարարական մօտաւորաւ փոփոխութեան
ինչպէս նաև ձախ կեղծութիւն հետ բանակ-
ցութեանց զրոյցները :

Իլ 9 օգոստ.

Գերմանիոյ կայսրն այսօր մեկնեցաւ
մեր քաղաքէն :

Լրագրքը ոմոնք կը հաստատեն թէ
երկու կայսերաց մէջ քաղաքական խնդ-
րոց վրայ խորհրդակցութիւն բնաւ չէ
եղեր :

Բեդրեսպուրկ 9 օգոստ.

Պահեստի զօրաց (Լանսկէթ) 'ի զէն-
կոյսիլը սարսափ ձգեց Կովկասու ժողո-
վըրդոյ մէջ :

Պատկեր 9 օգոստոս.
Թուրքիոյ կողմէն Աֆղանստանայ է-
միրին դեսպան զբաղւած Ահմադ խոյնար
էֆենտին այսօր Պատկեր 9 օգոստոս : Ետեւ
նաեւ ինչո՞ք ժամանակ ետեւորագին հա-
մակութեամբ ընդունուեցաւ երկրին իս-
լամաց ընդեր երկնիկներէն , որք այս առ-
թիւ դուստրուած էին :

Լոնտրա 10 օգոստոս .
Անգղիոյ կառավարութիւնը վերջապէս
բացորդ կերպիւ յայտնեց Արեւելեան
խնդրոյն մէջ բռնած քաղաքականութիւնն :

Երէկ երկուեւ լորտերուն խորհրդ-
դարանին մէջ ազատական ընդդիմադիր
մասին զլուխ Լորտ Արանդիլ ստիպողա-
կան կերպիւ պահանջելով կառավարու-
թեանն որ Թուրքո-Ռուսական պատե-
րազմին ապագայ պատահականութեանց
մէջ բռնելիք քաղաքականութիւնը խոր-
հարանին միակողմէն առաջ որոշա-
պէս յայտնէ , Լորտ Պրոքսմիլիս եր-
կար աստիճանութեամբ մը պատերազ-
մին նախընթաց պարագաներուն պատ-
մութիւնն ըրաւ : Հաստատեց թէ Անգ-
ղիոյ կառավարութիւնը չափ աշխատեցաւ
պատերազմին առաջին անգամ , բայց իւր
ամեն ջանքն ապրողիւն ելաւ դեսպանա-
խորհրդին մէջ : Վերջապէս ներկայ պա-
տերազմին վրայ խօսելով հետեւեալ խօս-
քերն աւելցուց .

« Պատերազմին սկիզբը՝ կառավարու-
թիւնը ծանոց թէ իւր դիտարութիւն-
նը խիստ բայց պայմանաւոր չեղորութիւն
մը պահէ էր , այսինքն քանի որ անգղի-
ական շահերը վառնող մէջ չէին : Անգ-
ղիա չեղոր սխտի կենայ : Անգղիոյ շահե-
րուն ինչ ըլլալն ալ հասցեցողիք Ռուսիոյ ,
վասն զի Լորտ Տէրսիլ Լորտ Լոքսմիլիս
ուղղակի հետադարձ մը մէջ մի առ մի թը-
ւեց այն կէտերն որոց դաշինքն Անգղիոյ
շահուց հակառակել էր : Յայտնի է որ այն
հետադարձ Ռուսիոյ առաւել պատասխա-
նը հաշտասէր էր և բարեկամական : Մեք
ընաւ պատճառ մը չունինք կասկածելու
թէ Ռուսիա պատուաւոր կերպիւ չափի
պահէ այն պայմաններն՝ յորոց կախեալ
է մեր չեղորութեան շարունակութիւնը :
Անշուշտ սխտի յարգէ Գարդանիս ու Կ-
Պոլսը , Սուլթէն ջրանցքն ու Պարսից ծո-
վածոցը : Ռուսիան թաղուհւոյն կառավա-
րութեան քաղաքականութիւնն երկու բա-
ռի մէջ կը բովանդակի , այն է՝ սոյն պայ-
մաններուն պահպանութեան մէջ : »

Լոնտրայի այս առաւելեան լրագիրը
զոհոթիւն կը ցուցնին կառավարութեան
այս նոր յայտարարութիւնէն , բայց հա-
ւանական է որ ընդդիմադիր կուսակցու-
թիւնն այս շարժու դարձեալ ստիպ մը
դռնէ իւր վերջնական հիմնադիրը ներ-
կայելու :

Լոնտրա 10 օգոստոս.
Թայմը լրագիրը Վիեննայէն հեռագիր
մը կը հրատարակէ ծանուցանող թէ
Սերպիա 40000 մարդ կը զինուորէ , որք օ-
գոստոս 20էն առաջ հարաւային Արեւել-
եան սահմանազուլեթը պիտի զբաղին :

Տէյլի-Նիւս ալ կը ծանուցանէ թէ Ռու-
սական մեծ զորութիւնը գումարեալ են
Օսման-Պաղարի մօտ : Յիշեալ թերթը կը
կարծէ թէ Ռուսաց զինուոր ճիշդն Օս-
ման-Պաղարի վրայ պիտի թափի :

Համասի հեռագրական դործակալու-
թիւնը կը ծանուցանէ թէ իրեն ուղղեալ
քաղաքական հեռագիր մ'ալ արգիլուեր է
այսօր :

Լոնտրա 11) օգոստոս.

Օսմ. Բօնս.	9 9/16
Փոխ. 1863	9 7/8
» 1869	9 3/4
» 1871	37 1/2
» 1872	47
» 1873	9 3/8
» Եղիպտ.	37 1/2
Անգլ. Բօնս.	9 3/8

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանն առաջին Օսմանի-
էի մեծ ժապուէնը առաւ Բարձր.
Շէյխ-Իւլ Իսլամ իսլամ էֆենտին ,
և առաջին Մէճիտիէի ակահակու-
պատուանշանը առաւ Մէ.քիէի Էմիր
Շէքրիֆ Հիւսէյին փաշային :
Այս վերջինն երէկ մեկնեցաւ մայ-
րաքաղաքէն :

Օսմանեան Հա.թի.թէթ լրագիրը
կը ծանուցանէ թէ ի նպատակ Օսման-
եան վիրաւոր և հիւանդ զօրաց Հընդ-
կաստանի մէջ բայցուած հանդ.անու-
կութեան գումարէն 130000 անդ-
դիական լիրայն և 200000 ռուբլի
փոխանակող ըրեր զգուեր են Լոնտ-
րայի Պանքային վրայ :

Ռադիկալտի կուռնի մէջ վիրա-
ւորուած և դարձանուելու համար
մայրաքաղաքս բերուած Ֆէյլուլահ
փաշային ալ ոտքը կարել հարկ ե-
ղաւ :

Հինգ-չարթի իրիկուն Էտիրնէն
Կ. Պոլիս եկող կառ.խումբն 200 վի-
րաւոր և 30 Պալլար ապրտամբ բե-
րաւ :

Վսեմ. Նամիգ փաշան հինգ շար-
թի իրիկուն Կ. Պոլիս վերադարձաւ
Շուսնուէն :

Մայրաքաղաքս 18 շրջանակն-
բուն արու բնակեաց անուններն այ-
սօր վաղը դրուիլ պիտի սկսին քա-
ղաքագահ զինուորութեան համար :

Երէկուան Լա թիւրքի մէջ կը
կարդանք թէ չորեքշաբթի օրն իւս-
կիւտար Հայ տիկին մ'սպաննուեր է
կոչկագործ Հայ երիտասարդէ մը :

Սոյն ոճրագործութեան պատ-
ճառն է եղեր յիշեալ տիկինը նստած
տանը վարձու չվճարուիլը :

Ոճրագործը բռնուելով բանտար-
կեցաւ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

29 յուլիս. ուրբաթ իրիկուն	10,21
30 յուլիս. շաբաթ առաւօտ	
բացուեցաւ	10,21
ժամ 6 ին	10,20
Բուսիլի երկրաթուղի	Փր. 28 25
Թղթագրամ	Իր. 178 1/2
ԸՆԹԱՅՐ ԱՐԺԵՊԹՈՅ	
Կ. Պոլիս 29 Յուլիս	
Ստիկիթ Ժէնըալի բաժ. Անգլ. լիր.	3, 5
» ֆոսթանալութեան	4,32
Կ. Պոլսոյ Պանքային	2,33
Քրէտի Ժէնըալ	2,
Քրէտի Օսթրո-Թուրք	—
Փոխ. 1863	Ֆր. 53
» 1865	» 54
» 1869	» 49 50
» 1872	» 47
» 1873	» 49
Թրամուս	Օսմ. լիր. 1 20

Ա.Զ.Գ.ԱՅԻՆ

Երէկ աղբային ժողովը գումա-
րեցաւ Գումա.ժ.ժ. Մայր եկեղեցին
ընդ նախագահութեամբ Ամեն. Ս.
Պատրիարք հօր և ատենապետու-
թեամբ Վսեմ. Յ. Նուրեան էֆէն-
տիի :

Ժամ 7ին ատեն բացուելով , Բարդ.
ժողովը 11 անդամաց ընտրութեան
քուէարկութիւնը կատարեցաւ , և
բացարձակ առաւելութիւն ուսացան
հետեւեալ մեծապատիւ անձինք .

Աւետիս Էֆէնտի Գոլթիան	
Դէորդ	» փանոսեան
Գէորդ	» Գրըքճեան
Գրիգոր	» Գարակէօղլեան
Ենովբ	» Տէմիրճիպաշեան
Կարապետ	» Յովսէփեան
Համբարձում	» Մաքսուդեան
Յարութիւն	» Սամանճեան
Յարութիւն	» Մէրեքճեան
Յարութիւն	» Թիւրապեան
Ռուբէն	» Գրիգորեան :

Այս 11 անձանց վրայ պէտք է
յուրեղնել արդէն ընտրեալ երեք
Մեծ . անձինք , որք են

Արեւ. Էֆէնտի Կիւլաքեան
Մատթէոս » Արիքսանեան
Տիգրան » Փէշթիմալճեան :

Սոյն ընտրութեանն ետեւ ժողովը
սկսեցին ընտրութեանն անցնելով ,
փափաղեան Ստեփան Էֆէնտի ման-
րաման զիտպութիւններն առաւ-
ջարկութիւնները մտիկ ըրաւ մինչև
ժամը 10 :

Յառաջիկայ նիստը 13 օրէն պիտի
դուստարի :

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Գոհութեամբ կը լսենք թէ այս
կարեւոր խնդրին իրաւախօսութեան
շրջանի մը մէջ մտեր է՝ Վենետիկի
Միլիթարեանց Կ. Պոլսոյ մեծաւոր Հ.
Մանուէլ Բաշունի վարդապետին խո-
հակոն ջանքը :

Յիշեալ Գեր. վարդապետն ան-
ձամբ Ս. Պատրիարքին երթալով
յայտներ է թէ Միլիթարեան միա-

րահութիւնը Սամուէլ Մուրադայ կը-
տակը ոչնչացնելու կամ անգործա-
րելի ընկու բնաւ դիտում հասնի փա-
րկել չենքը վաճառելով , այլ՝ ընդ-
հակառակն՝ իր նպատակն է այն լազ-
մածախ և ապարդիւն չենքը շահա-
ւոր դնով վաճառելէ ետեւ փարիզի
մեծ վարժարանաց մօտ տուն մը
գնել , և վենետիկ Ռաֆայէլ-Մու-
րատեան * վարժարանին ուսմանց
ընթացքն աւարտող յառաջագէտ
աշակերանները հոն տանելով՝ բարձ-
րագոյն գիտութեանց և արուեստից
ղեղեցնել՝ կառավարին կամաց հա-
մաձայն :

Ս. Պատրիարքը հայրը սոյն յայտա-
րարութիւնը գրով խնդրելով , Գեր-
վարդապետն ալ այնպէս ըրեր է : Ա-
սոր վրայ Ս. Պատրիարքը հայրն ալ
նորէն թագրեր մը գրելով առ Բ.
Դուռն , փարիզի չենքին վաճառման
արգելքը վերցնել խնդրեր է , առա-
ջարկելով որ յիշեալ կառիկն մէջ Հա-
յոց աղբին ունեցած իրաւունքը ճըշ-
գելու և ապահովելու համար խառն
մասնախորհուրդ մը կարգուի Բ. Գը-
րան հսկողութեան ներքեւ :

Սոյն խնդրոյն վրայ հետեւեալ
խորհրդածութիւնը զրկած է մեզ
Ռաֆայէլեան վարժարանին մէջ ու-
սում առած Հայ պատանի մը :

... Խմբագիր Տէր .

Ս. Պատրիարքը հայրը շատ լաւ գաղա-
վար մը ունեցած է՝ երբ կուզէ դործ-
նական կերպով հաստատել տալ Մուրա-
տեան վարժարանի մասին Միլիթարեան
վարժարանութեան վրայ աղբին հսկելու և
հայիւ պահանջելու իրաւունքը :

Աղբը կուզէ դիտուլ թէ Մուրատեան
վարժարանի եկամուտն ամբողջ ձրի ա-
շակերտ կրթելու կը դործածուի թէ ոչ :
Մուրատեան վարժարանի մինչև հի-
մա ընդունած աշակերտաց մեծաւոր մո-
տ ձրի կը համարուի : Քանի որ Միլի-
թարեան հարց խղճի մօտը դործածին
զպրոցիկն աղբիներն , էր դժկամակին հա-
շիւ տալու : Աղբը հաշիւ պահանջելու ի-
րաւունք ունի և կը պահանջէ . միթէ ա-
ւելի օգտակար չէ՞ Միլիթարեանց աղբին
ստանդարտութիւնը վայելել :

Աղբը կուզէ դիտուլ թէ Հայ աշա-
կերտը առանց դաւանադրի խորութեան
կընդունուի թէ ոչ :

Երբ Մուրատի կտակն աղբատիկ Հայ
մանկտի կուէ , յայտնի է թէ առանց կը-
րօնական տարբերութեան ամեն Հայ կը
հասկնայ :

Մեք աղբութեան վրայ մի մեծ դա-
ղաիրար ունինք և Հայ անուր կրօնական
դաւանութեան մը պաշտօնականութեանը
չեմք յանձնել : Լուսաւորչաւուան , Հը-
ռովմէաւուան , Բողոքական Հայք միշտ
Հայ են և իրարու եղբարք , թէ և այս
սկզբունքն աւելի փիլիսոփայական է քան
թէ քաղաքական : Ընդհանուր հա-
մարում մը գոյացած է թէ մեր վիճակն
ունեցող աղբի մը հարկ է մի կրօնական
զբօք և եթ ունենալ , այն դրօշն որ դա-
րեքէ հետէ մեր հայրենի երջանկութեանն
ու աղբատիկ վրայն է : Բայց Աստուծոյ
աղբատիկութիւնը ժառանգելու համար ու-
մանք ի մէջ Հայաստանեայց եկեղեցւոյ
ծոցէն անջատել մեկնել հարկ կը համա-
րեն , սակայն մեք զիտնալով որ իր հա-
ղին փրկել ուղղը կրնայ փրկել դայն
ուր որ ալ լլլայ , կը յարգուի խղճի ա-
զատութիւնն և չեմք կրնար զանալ նո-
ցա Հայ անուր :

Երբ մեք հայրենի կրօնից հաւատա-
րիւքս սոյրած տղատախտութեամբ կըմ-
բռնեմք աղբութիւնը , իրաւունք ունինք
յուրաքան թէ այլ դաւանանք խոտովանող
մեր եղբարք Հայ անուր մեզ չնորհելու
տրամաբանութիւնն մը չափով դռնեն :

Ես Ռաֆայէլեան վարժարանի աշա-
կերտ անհուն վիշա կ'զգայի սրտիս խորն
երբ այդ վարժարանի քառասուն աշակեր-
տաց մէջ զիս միայն կը տեսնին Հայաս-
տանեայց եկեղեցւոյ դաւալ առանց թու-
չակի . ոչինչ նուալ պիտի ըլլար իմ ցաւ

* Երկու վարժարանը միացուցած են
եղիւ , որ իրաւունք չէ : Գ. Խ.

եթէ այդ ուղակերտաց մէջ մի հաւովեա-
դաւան միայն տեսնէի . զի զիտեմք թէ
զպրոցի դրամեղաններու վրայ մէկ տեղ
նստելով պիտի ուսնինք աղբութեան մեծ
անուր տակ զիրար սիրել : Խալ բողոքա-
կան Հայոց մը զպրոցի չենքին պատկերն
խալ ցուցնելու չափ չեն մեղանշած :

Պատի չլինայինք բացառել Միլիթար-
եան միտարանութեան որոյ անդամ են Հ.
Արեւան , վեհ զգացմանց և հայրենասիր-
ութեան անձնաւորութիւնն , Գեր. Խղնա-
տիս լուսաւորեալ և աղբատիկ ետիսիւ-
սորը , Հ. Գաւիթ Նաղարէթեան ջերմ
Հայասէր և քաջ Հայագէտ երիտասարդ
վարդապետը , այս խղճահարութիւնը Լու-
սաւորչաւուան Հայ ընդունելու մասին ,
եթէ չզիտնայինք սրտիս ճնշում կայ նո-
րա վրայ Հռովմէ կողմէ : Երբ աղբին ըս-
տիսմամբը ամեն Հայ մանկանց Մուրա-
տեան վարժարանը դատարարականու ըս-
կըղբունքը դործադրութիւն դռնէ , Միլի-
թարեան հարց պատճառ մը պիտի չունե-
նան Հռովմէն երկնցելու , զի իրենց ա-
զատ կամքը չէ որ պիտի գործեն :

Բայց Լուսաւորչաւուան Հայք ինչ
կերպով իրենց կրօնական պարտաւորու-
թիւնը պիտի կատարեն :

Եթէ Հայոց մէջ մտնուանք Հռովմէա-
կանի տկարս ուղեւոր դռնէ , անշուշտ
Միլիթարեանց աշակերտներուն մէջ պիտի
չերթամք որոնել զայն : Եթէ Եսայեաննե-
րու , Ապոստոլականութեան , Վատիկաններու ,
Շիւսմանեաններու պէս կրթեալ և աղբա-
տէր աշակերտներ ընծայէին մեզ աղբին
ամեն վանքերն , անշուշտ բաւականէն ա-
ւելի դո՛ւ պիտի ըլլայինք : Բայց և այն-
պէս մեք խղճի ապաստութեան աշտպան-
քու չեմք կրնար ներել որ մեր տղայոց
խղճի բռնարարութիւն ըլլայ : Երբ շատ
հեշտաւ չզգան իրենց մարց և խորց նը-
ւերական կրօնին դէմ հարուածներ Վե-
հանձն զգացումներով պէտք է որ մտնին
Հայ դաւալաց սրտերն , և խղճի բըռ-
նաբարութիւնը մի մեծ անբարոյականու-
թիւն է : Ռատի հարկ է որ մի քահանայ
ի մէջ Մուրատեան վարժարանը դռնէ
զպրոցին ծախիւք :

Մեծ յոյս ունինք մեր Ս. Պատրիարք
հօր ջանքը Մուրատեան վարժարանն
այնպիսի վիճակի մէջ տեսնել որ զաղբը
զոհանցնէ :

Արեւ. Պատրիարք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՆԻ

Օրախոսք . — Խմբից դատարարականութեան .

Աղբիւ Մատիս .

Այս աւուր զրկուեց նիւթս , ինչպէս
խոտաղաց նախընթաց յօդուածովս , բա-
րոյականութեան , կամ ի մասնաւորի մեր
աղբային բարոյականութեան վրայն է ,
վասն զի դատարարականութեան մէկ ճիւղն
ալ բարոյականն է , որ պաշտօն ունի կըր-
թել զմարդուն սիրտն , ուսուցանելով
նրա ընկերական բարին :

Ինչպէս ամեն բան , նաեւ աղբ մը կամ
հատարականութիւն մ'ալ իւր բարոյականու-
թիւնն ունի :

Ամեն որ կուզէ ու կը լրացուի որ Հայ
աղբայն աղբային դատարարականութիւն
արուի :

Ինչ է աղբային դատարարականութիւն
կրօնած բարը . —

— Տղայոց սրտին ու մտաց աղբային
հողի աղբէր :

Ինչ է աղբային հողի աղբէր . —

— Ճանչցնել և տալուր նոցա սրտին
ու մտաց մէջ իւր աղբին սկսն ու հա-
սարկաց օգուար :

Հատարական օգուարն անձնական չա-
հէ վերադառ համարելն աղբային բա-
րոյականութեան նշանաւորն է :

Երբ աղբի կամ ժողովրդեան մ'ան-
հատներն այս զգացումը չեն կրեր , երբ
աղբային դործոց մէջ իրենց նպատակա-
կէտն հատարական օգուար չէ , երբ այն
վսեմ ու գերազանց զգացումը չունին որ
աղբին դէմ անհաստատիւմ , խարդախ ,
մատնիչ , դաւաճան , զրկող և քանդիչ ու-
սակեաց եկեղեցւոյ դաւալ առանց թու-
ղի , երբ համարուած չըլլան թէ սոյն մու-
լութիւններն անբարոյի կրօնն են , և երբ
կրօն , աղբի մը անձնիւր անհատ սոյն

հոգեով ու գաղափարաւ կրթութեան չեն, չկրնար ըստիկ թէ այն ազգին մէջ բաւականութեամբ կայ:

Եթէ այս հոգեով կրթութեամբ ըլլար մեր ազգին առաջնաց, մեր ազգային հաստատութիւնները միթէ այսօրուան տխուր վիճակին ենթակայ կըլլային: Ինչո՞ւ պիտի չունենայինք այսօր ազգային փառաւոր հաստատութիւններ, բարեկարգ դըպրոցներ, բարձրագոյն վարժարաններ, վարժարաններ, տնային ոգնութեան և գաղափարականութեան յառաջացման յատկացեալ դրամագումարներ և:

Արեւմտեան լազնի հանգրաւութեամբ թէ ազգին ասոնք պիտի չունենար այսօր.— ես կըսեմ ոչ. մանաւանդ երբ ի նկատի առնենք կէս դար առաջ ազգին ունեցած նիւթական վիճակն և ի յաջածենք թէ երկրին գանձը զրեթէ Հայոց ձեռքն է:

Ահա ազգային բարոյականութիւն չը կենալուն երեսն ազգին կրած դառն վշտաւ:

Բացարձակապէս բոլոր չեմ ուզեր թէ ազգին հարստութիւնը մասնաւորապէս կուրորդ անցած է:

Հաւանական է թէ այնպիսի դէպքեր տեղի ունեցած ըլլան. բայց ամենէն հաւանականն այս է որ ազգին հարստութիւնն անտարբեր կամ խմտաւորութեան և անտեսապիտութեան վրէժ անձանց ձեռք գտնուելով փճայեր է, որուն պատճառն ալ վարչական յոռի դրութիւնն եղած է, որ ծաղում առած էր երկրին վարչական ձեռքն և ժամանակին ազդեցութեան:

Մեր ազգային բարոյականութիւնն այսպէս խանդարման ենթակայ եղած միջոցին՝ միայն բան մը կար որ կրցեր է զազգը կանգուն պահել, այն է կրօնը: Հայն իր ծագումէն մինչև այսօր դրեթէ միշտ հաւատարիմ դռնուած է իր կրօնին, և ամեն բան զոհած է միայն իւր կրօնը պահպանելու համար:

Սակայն տղիւթութեան ժամանակէն ըստ մէջ իրօնի բարոյականն ալ կորուսեր և պահպանութիւնն իր դերացոյց առաքնութիւն, երկրի իւր բարոյական, և նախապաշարուն իւր էական մասն կրօնի՝ պահեր է հաւատարմաբար:

Ժամանակը թէպէտ այդ սխալն ի վեր հանեց և ճանչցուց, սակայն ազգը մինչև հիմա չունեցած տակաւին իրեն համար ազգային գաղափարականութեան սկզբնութիւնը մը, որպէս զի ազգային առաջը բարոյականութեան համար ալ հիմ մը, ուղղութիւն մ'ունենար:

Ի բայց առեալ մասնաւորութիւնները, կըրնան անուս և ազգային զգացումը զուրկ վիճակի մէջ կը դառնար զփրկողաբար. ոչ իւր պաշտօնին սահմանը դիտէ և ոչ իւր պարտաւորութիւնը կը կատարէ:

Իւր պարտաւորութիւնն այնպէս կը կարծէ թէ ծնածը մկրտել, մեծցածը պատկել, մեռածը թաղել, գատիկ ծնունդի տուն օրհնել և յեկեղեցւոյ պաշտօն կատարելն է միայն:

Բոլոր չեմ ուզեր թէ կըրնը նիւթական շահ պէտք չէ ունենայ. ընդհանրապէս իմ կարծեալ այն է որ կըրնը շատ հասնողիտ պէտք է ստրկի, ապրուստի համար բնաւ մտածելու չէ և իւր նիւթականը՝ այն է՝ ներկան ու աղաղան պէտք է պատահելով ըլլայ, վասն զի «որ սեղանս և ոյն ծառայէ, ի սեղանոյ անտի կերիցէ»:

Բայց նախ պարտքը, ապա իրաւունքը:

Կըրնը պէտք է ճանչէ իւր կոչումը, կատարէ իւր պարտականութիւնները, յարգէ իւր պաշտօնը և յինքն ըստ ամեն նային օրինակ ընծայէ յաղորդական, և զգուշանայ զայն իրականութեան և եպրեղի վարմունքներէ, օտարամուտ դրութիւններէ և ապրիւնի պահանջներէ:

Կըրնը պէտք է գիտնայ թէ ինք տէր չէ, այլ պաշտօնեայ յեկեղեցւոյ, որ ազգին է, և մեր ազգային եկեղեցին բնաւ խորք ընդունիր եկեղեցականին ու աշխարհականին մէջ:

Միթէ այս նախանձին վիճակին մէջ կը գտնուի այսօր մեր եկեղեցականութիւնը. — մասնաւորութիւնն ի բայց առեալ ոչ:

Ժողովրդին ընտանեկան բարոյականութիւնը պահպանելու պաշտօն ունի կըրնը, բայց երբ իր սոյգ պարտքը կատարած է. — զրեթէ երբէք:

Մեր ազգային ընտանեկան բարոյականութեան օր ըստ օր է քայքայման վիճակի կը մերժի, և կըրն անփոյթ է: Գնա՛ Պատրիարքարան և տես թէ ամուսնական դատերն ո՞րչափ բազմաճաղով վրայ են...:

Մեր մէջ կրօնական զգացումներն ալ ևս քան զիս պաղելու կը միտին, և կըրն անփոյթ է:

Մեր եկեղեցականներէն շատեր իրենց եպրեղի վարմունքով զայն անպատեհ տեսնելը կը բազմապատկեն, և կըրն ոչ միայն անփոյթ է իւր պատեհոյն, այլ ըստ էր պաշտօնը կը կանգնի այնպիսի վատ շուէր եկեղեցականաց և շուէր որ ի զգացութիւնն դառնան:

Պատկանութիւնն ու բողոքականութիւնը կը ճարտիկ դառնաւ մէջ, և եպրեղիականներն ու վարդապետները դառնալուն պարտականութեամբ տեղերնուն չեն շարժիր և հոս երկպառակութեան և ներքին խռովութեան որոմներ կը ջրանին անխնայաբար, մինչդեռ դառնութեան հոյժը և զուրկ կը մնան և բաղում շահեր ու ազգային իրաւունքներ զոհ կըրթան առաջը:

Սոյն վիճակն ունի ահա կըրնին բարոյականը, այն կըրնին կըսեմ, որոյ երկնային շարժականութիւնները կրօնի, ազգային բարոյականութեան, դպրութեան, յառաջդիմութեան և ազգային շահոց և իրաւանց նախանձին անպատեհներ էին և Հայաստան երկնային էր:

Կըրնէն ետքը կողմ ազգին հարուստ դար:

Ասոր ալ ազգային զգացումներն երթալով պաղելով վրայ են. իրեն վիճակած պարտաւորութիւնները շուէր կատարել (մասնաւորութիւնները չեմ ուրանար) և զեղբունութեան ու շարժականութեան մէջ իրար դերապանները համար դուստրներ կը վատեն և իր փառքն ու պատիւը սին տեսնելու մէջ կորսնէ, մինչդեռ կրնայ մեծագործութեամբ, առաքնութեամբ և ազգային գաղափարականութեան ծառայման ձեռնառու և քաջալեր ըլլալով անմուտայ յիշատակներ թողուլ ազգին մէջ, և յաւանական երախտադիտութեան իրաւունք ստանալ:

Գալով ժողովրդեան դասուն. այս ալ թէ և զգացում ունի, բայց ըստ առաջնորդութեան չըլլալով, ըստ մեծի մատին ընտրութեան և ճաշակէ զուրկ է, այնպէս որ մերժելու արժանին կը քաջալերէ, և քաջալերելու արժանին կը մերժէ կամ կը լքանէ:

Այս ըստին մէկ յայտնի ապացոյցն է հայկական մամուլն արդի վիճակն, որ ի բայց առեալ մէկ երկու մասնաւորութիւններ, կարեկցութեան արժանի է:

Այս դասն ալ, զփրկողաբար սրտութիւնը ճարտարութիւն, կեղծիքն ու նենգութիւնը հանձար, խարէութիւնը հրեշտապիտութիւն, վայն ու հրապոյրը ճաշակի փափկութիւն, խմտապիտութիւնը փրկիտփայութիւն, լրութիւնն ազատախորութիւն, շողորդութիւնը քաղաքավարութիւն և հանգըն ու մեղութիւնն ընտրութեան պահանջում կը համարի:

Հայուն բարոյականութեան նախնական տիպն այն է արդեօք.—

— Ես կըսեմ ոչ, պատմութիւնը վիայ է այս ըստին:

Ուսկից ծաղում առած է ուրեմն արդի վիճակը.—

— Իւր գտնութեամբ քաղաքական վիճակէն:

Հետեւաբար անդարմանելի չէ և ազգային գաղափարականութեան ուղղութիւն մը եթէ գծուի, Հայը կ'ստանայ վերջնական իր ազգային բարոյականութիւնը. բայց հարկ է գիտնալ թէ յաղաղումն այլ ևս անհերքելի է, զի կորստեան վնջն բերանը հասած է:

Բարեբաղդաբար՝ ժամանակը փոխած ըլլալով, Հայը կրնայ իր այսօրուան վիճակին ի հիմանց յեղաշրջել, եթէ ինչպէս ըսի՝ ազգային գաղափարականութեան ուղղութիւն մը գծուի:

Յատկաւ թէ կրցի ուրուագծել մեր ազգին մտաւոր և բարոյական վիճակը:

Յաջորդ յոյսաւորով դարմանեալ վրայ խօսելէ ետք՝ պիտի անցնիմ երրորդ մասին, որ ըստ սկզբանէ՝ այս երկուքին բարեբաղդին կախում ունի:

ՄԱՀԱՐԱՆԻ

Ե Ի

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Պատրիարքական փոխանորդ Գեորգ Գ. Մկրեան իւր հանգուցեալ առաքնիկ որդեկին արդէն անմահացեալ յիշատակը կրկին նախադարձեց ՄԱՀԱՐԱՆԻ Ե Ի ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՌԱՋՈՒՄԸ ՊԱՏԱՆԿԱՆ ՅԱՆՈՒՍ Ե ՄԱՐԵՆԵՆ՝ մահադերեալ դըքով մը, որոյ առաջին մասին՝ այն է յիշատակարանին մէջ վիճակի հայրն իւր չնաչխարհիկ զաւակն կենսագրութիւնը կըրնէ գրական գեղեցիկ լեզուով, իննեւտանուանայ կարճ բայց բեղմնաւոր կենաց նկարագիր մը՝ որոյ մէջ հանգուցեալ զգոն և առաքնիկ պատանւոյն քանի մը նշանաւոր նամակներն ու քերթումները կը տեսնուին:

Երկրորդ մասին մէջ ալ հանգուցեալ պատանւոյն մահուան տուժիլ մէջ՝ ազգային լրագրաց մէջ հրատարակեալ յոգնածներն և թէ՛ առ վըշտակիր հայրն ուղղեալ յաւակցական նամակներն ու քերթումներն հրատարակուած են, որոց ամենը որդեպաշտ ազգով մը կը կնքէ Գեորգ Գ. Մկրեան:

Սոյն յիշատակարանին առթիւ հետեւեալը գրուած է մեզ ի հրատարակութիւն:

Առ Գեորգ Գ. Մկրեան,

Վաղամուկի որդեպաշտ յիշատակն յաւերժացնելու համար ի գործ դըրած միջոց սիրելի:

Ուսումնասիրելով պատանին, որ ի կենդանութեան գրոց հետ պարապելն միայն ընտրած էր իրեն քաղցր հաճոյք, յերկնից տեսնելով իր յիշատակին մատանին մէջ յաւերժացումը՝ պիտի հրճուի անշուշտ:

Յայդ գեղեցիկ է, հայր, Ձեր այս խորհուրդը, յորմէ պիտի օգտին նաեւ մեր ազգային գաղափարն ալ:

Ուստի կը գովմ' Ձեր այդ խորհուրդն, որ գեղեցիկն, բարոյն և ճշմարտին սիրահար մտացոյց յղացումն է:

Խղիւ թէ շատեր ալ՝ փոխանակ մեծածախ տապաւնաբար կանգնեալ, զորս ժամանակը կը մոչնցնէ, ձեր այս օրինակին հետեւին, որոյ նպատակն ինչպէս ըսի՝ կրկին է:

Գեորգ Գ.

... Տէր.

Արամեան երկուսն փոխարանի Հոգաբարձութիւնը կըրնէ որ բուն հանձնը Ձեր և Ձեր ազնիւ ընտանեաց ներկայութեամբ պատուել փոխարանիս Սրբանախարարական հանգեօր որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի (Յուլիո 31), ընդ նախագահութեամբ Ամեն Սրբազան Պատրիարք հօր՝ Ժամ 6 Ա/2:

24 յուլի 1877 Հոգաբարձութիւնն ի հրատարակելու Վարժարանի

... Լեւոնտի.

Պատիւ ունիմ, Արդոյ հասարակութեան ծանուցանելու թէ Եւրպի Ս. Եղիա եկեղեցւոյ Պեղծեան և Հրեւիփոխանից երկուսն փոխարանաց տարեկան հարցաքննութեանց պարագաւ յաւանական հանգեօր պիտի կատարուի ի Ժամ 6 Ա/2 յունիս կիրակի յուլի 31 ի Ս. Եկեղեցի:

Վասնզ Եմք որ ազգի գաղափարականութեան փափաքով ամեն ազգաւոր անձինք ներկայ ի հրատարակելու պիտի փութան իրենց և իրենց ազնիւ ընտանեաց ներկայութեամբ պատուել այն Ազգահանգեօր:

Կը խնդրեմք . . . Լեւոնտի որ Ձեր ազգապաշտ լրագրոյն միջոցաւ ներկայ հրատարակել բարեհաճիք օրով մնամք երախտապարտ:

* Ի գիտնայ Հոգ. երկուսն փոխարանաց Գ. Մարտիան Ս. Յարութեան 1877 Յուլի 27 Եւրպի

... Տէր.

Հանգեօր ձեր և ձեր ազնիւ ընտանեաց ներկայութեամբ պատուել փոխարանիս ուսանողաց միջոցաւ յառաջիկայ հանգեօր որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի, յուլի 31, ի Ժամ 6 Ա/2:

1877 յուլի 26 Հիմնադիր-Տէր Գեորգ Գ. Մկրեան Գաղափար

Ա. Զ. Դ.

Համազգեաց բնկերութեան վարժարանին տարեկան հարցաքննութիւնը պիտի կատարուի օգոստ. 1, 2, 3 4 5 և 6 եւր. առաւօտեան Ժամը 3 քէն սկսեալ:

Ի Լ Ա Ն

Աստիքի Շահանէ Լալիսէ անպարքնա թարիխի գոնթթաթտան իթիւպարէն 10000 ատէտի 31 կիւնէ քատար, դուստը 20000 ատէտին տալիս հէր օն պէշ կիւնտէ օնար պին ատէտի թէպիմ օրուսարաք իքի մահ նիհայէթինտէ արքասը ալըմաք վէ ինայ իտէն պահասը մադպուզ օնէ նէպէրի վիրուսինտէ փմ մէճլաիլ յէ 20 դուշա վէ մէճլաիլ վէրլմէզ օնէ փիւսաք ֆիւսթըյըլ պիլ հիւսապ Ֆարգըյըլ պէրապէր գալիմէ օլարաք պէր վէճիլ փէշին Նիդա միլէ իսպիլնէսինտէ վէրլմէք շարթըյըլ, Տարը Շուրատա մահֆուզ 3 պոյ նուսնէյըլ վէճիլ մուպաքա օլուսնաք 30000 ատէտ պոլընէլ ի ինկիլթէրա ապաւնտան մամուլ շընէլին պէհէր ատէտի 70 դրշա թալիպի Էօհտէսինտէ օլուպ աղաթօսըրումիննիլ Էրիննիլ փաղար էրթէսի կիւնէ գարարը գաթիլի վէրլմէք ինտէն, իթա իթմէյէ թալիպ օլանլարէն եէվմի մէքըրէրտէ Տարի Շուրայի ասքըլիլ կէլմէլըլ:

28 թէմուզ 1877

Պապը Սէրասքէրի

Պիւր նիւմէրօ գալըն գանափաշօտան մամուլ ճուվալ ատէտ իկիլմի պէշ պին, պէհէր ատէտի տօղուզ պուշուգ զրուշ:

Իքի նիւմէրօ գալըն գանափաշօտան մամուլ ճուվալ ատէտ իկիլմի պէշ պին, պէհէր ատէտի սէքըլ պուշուգ զրուշ:

Աստիքի շահանէ Լալիսէ անպարքը իլուն թարիխի գոնթթաթտան իթիւպարէն թէպիլմէ պէտ իլէ օն պէշ կիւնէ գատար իէնի ճամի հալիլիստէ թէպիլմ օլուսնաք վէ պահասը մադպուզ օնէնտէլըլ վիրուսինտէ պէր վէճիլ փէշին երլըլիլ գալիմէ երլըլ զրուշ օլարաք իթա գըլընմաք շարթըլ իլէ միւպալթա օլուսնաք պալաւտէ մուրադգամ իքի գալմէ ճէման էլ իլ պին ատէտ ճուվալ ֆիլիպթը մուրադգամաի իլէ թալիլիլ Էօհտէսինտէ օլուպ թէմուզըրումիննիլ օլթուզըննը ճիւմա էրթէսի կիւնէ գարարը գաթիլի վէրլմէք ինտէն, իթա իթմէյէ թալիպ օլանլարէն եէվմի մէքըրէրտէ Տարի Շուրայի ասքըլիլ կէլմէլըլ:

26 թէմուզ 1877

Պապը Սէրասքէրի

4. 0. 001-0.02